

ԻՆՆԵՐՈՐԻ ՏՅՈՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմայն խմբագրատան մէջ:

(Օտարաբարբառները գրվում են ուղղակի
Тифлис. Редакция „Муса“)

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնները համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՂԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածողները.— Ներքին տես-
ութիւնը: Նամակ համախոց: Նամակ խմբա-
գրին: Արտաքին տեսութիւնը: Յրանսիրա-
նամակ թիւրքալից:—Աշխարհ: Պատասխաններ:
—Աշխարհ: հեռագիրներ:—Հայտարարութիւններ:
—Բանասիրական: Ղովտի կինը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆԵ- ՆԵՐ

Մեր անցեալ յօդուածներից
Բրեդդի գործի մասին ընթեր-
ցողը յիշում է որ անգլիական
առաջին միսիստը Գլադստոն ա-
ռաջարկել է համայնքների ժողո-
վին մի վճիռ, որով այսուհետեւ
պիտի թող տրվի պարլամենտի
խրաքանչիւր անդամին, ով որ չէ
կամենում կրօնական երգում տալ,
հաւատարմութեան հասարակ խոս-
տում անել:

Այդ վճիռը միաձայն հաւա-
նութեամբ ընդունվեցաւ համայնք-
ների ժողովից: Միայն այդ վճիռն
աւելացրին հետեւեալը, որ իւրա-
քանչիւր անգլիացի կարող է զան-
գատվել դատարանին պարլամեն-
տի այն անդամի դէմ, որ ընդուն-
վեցաւ պարլամենտում առանց որ
և է կրօնական երգման: Բայց ի
հարկէ անգլիական ոչ մի դատա-
րան երբէք չի ընդունի այդ տե-
սակ գանդատ, մանաւանդ որ
այժմեան անգլիական դատարան-
ներում շատ անգամ վկաներն էլ,
որոնք յայտնում են թէ ոչ մի ե-
կեղեցուն չեն պատկանում, ըն-

դունվում են առանց երգման, հա-
սարակ խոստումով, որ «կը ցոյց
տան ճշմարտութիւն և միայն
ճշմարտութիւն»:

Նոյն իսկ Բրեդդի շատ անգամ
վկայ է եղել կանչված դատա-
րաններում և նրա ցուցումները
ընդունվել են առանց երգման,
որովհետեւ նա յայտնել է որ ոչ
մի եկեղեցուն, ոչ մի կրօնական
համայնքին չէ պատկանում:

Անգլիական օրէնքների մէջ կան
շատ անօմալիաներ, այսինքն
հնութիւնից մնացած անբնական,
այլանդակ աւելուածներ, որոնք
գրեթէ երբէք չեն կատարվում:

Օրինակ մի օրէնք կայ, որ երբ
որ պարլամենտի նիստի ժամանակ
պարլամենտի մի անդամ միայն
պահանջում է որ նիստը դադա-
րակ լինի, պարլամենտը ստիպված
է խնդրել հասարակութեանը որ
դարձակի լոծաները և դուրս գայ
դահլիճից: Քանի մի տարի սրա-
նից առաջ Միլիլան պատգամա-
ւորը առաջարկեց որ այդ օրէնքը
վերցնվի և որ հասարակութեան
հեռացնելը և պարլամենտի նիստի
դադարեցում լինելը վճովի ձայների
բազմութեան բուխարկութեամբ
և ոչ թէ մի անդամի առա-
ջարկութեամբ միայն: Պարլա-
մենտը չընդունեց Միլիլանի ա-
ռաջարկութիւնը: Այն ժամա-
նակ Միլիլանը սպասեց մի
հետաքրքիր նստի, երբ բազմութիւ-

հասարակութիւնը լցնում էր պար-
լամենտի դահլիճի լոծաները և
ինքն Անգլիայի թագաժառանգը
նստած էր լոծաներից մինի մէջ:
Այդ նիստի ժամանակ Միլիլան
յանկարծ վեր է կենում տեղից և
պահանջում է որ նիստը դադարեց-
վի, ասելով որ նա նկատում է
«օտար մարդիկ» լոծաներում: Այ-
նապէս ամբողջ հասարակութիւնը
և ինքն թագաժառանգը ստիպվե-
ցան իրանց տեղից վերկենալ և
հեռանալ դահլիճից:

Այնուհետեւ պարլամենտը շը-
տապեց փոխել օրէնքը և վճռեց
որ նիստի դադարեցում անելը լինում
է ոչ թէ մի անդամի ցանկու-
թեամբ, այլ ձայների բազմութեան
որոշմամբ:

Այդպիսով անգլիական օրէնք-
ներից հնացած յօդուածները փոքր
առ փոքր վերցվում են, ժամանա-
կի պահանջմանը համեմատ:

Այժմ լրագիրները հաղորդում
են, որ հէնց որ Գլադստոնի ա-
ռաջարկութիւնը երգման կամա-
ւոր լինելու մասին ընդունվեցաւ,
միւս օրը արդէն Բրեդդի ներ-
կայացաւ համայնքների ժողովը և
պահանջեց որ իրան ընդունեն
պարլամենտի անդամ, առանց եր-
գման:

Այդ ճշմարիտ նա ընդունվեցաւ
համայնքների ժողովի անդամ ա-
ռանց կրօնական երգման, միմիայն
հասարակ խոստումով, որ հաւա-

տարիմ կը լինի ազգին, սահմանա-
դրութեանը և թաղութանը:

Ուրեմն Անգլիան թէև դան-
դաղ բայց հաստատ քայլերով ա-
ռաջ է գնում ընդհանրապէս ա-
զատութեան և մանաւորապէս
հաւատի ազատութեան ճանա-
պարհի վրա:

Այժմ բաւական է, որ ժողո-
վրդից ընտրված, պարլամենտի
անդամ ընդունվելու ժամանակ
յայտնի որ ոչ մի քրիստոնէական,
ոչ էլ մի այլ որ և է եկեղեցուն,
ոչ մի դաւանութեան չէ պատ-
կանում, ուրեմն չէ հաւատում, մի
խօսքով ոչ քրիստոնէայ է, ոչ էլ
ուրիշ կրօնին է պատկանում.— և
նրան պարլամենտը չէ կարող սը-
տիպել որ կրօնական երգում տայ,
այլ նա կընդունվի փոխարինելով
երգումը հասարակ խոստումով:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱՐՈՒՅՑ

27 յունիսի

Այս տարին մի օրհասական տարի էր Շամա-
խու համար: Հացի և ուրիշ կենսական պիտոյ-
ների թանկութիւնը չիթած, ջարդած ու փշած
էր իւրաքանչիւր մի հասարակութիւն: Ատուժոյ
բարկութիւնը, ինչպէս ասում են շամախեցիք, ան-
խտիր հասած էր թէ հային և թէ թրքին, թէ հա-
րապին և թէ աղքատին:

Եւրոպոյ մեր մեղքից, բոլորը մեր մեղքից, կըր-
կնում էր ջերմեռանդ շամախեցին, փարիսեցու
նման իր կրօնին խփելով: Ատուժած մեր մեղքի
համար այդպէս պատժում է մեզ. արդ ի՞նչ է ան-
սել ալիւրի պուրը 4 լուրի, դարին 3 լուր 50

կնով մասին: Բայց երբ մօտեցան նրանք կրկին
մեղ, ևս տեսայ որ միտքիս Գիկոսի աչքերը
լաց էին եղած, իսկ Ձէկմանի երեսի վրա գծա-
գրված էր խռովութիւն և անբաւականութիւն:
Եւ հանգստացայ միայն այն ժամանակ, երբ խա-
ցայ որ առաքելութիւնը յաղթող է գտնվել գայ-
թակղութեան դէմ:

Աղագեալ զեղեցիկուհուն տեղափոխեցին Երուսա-
ղէմ: Այս վարկիւնինց նա գրաւեց բոլորովին Գիկ-
ոսի խնդր և սիրտը, և երբ նրա կիբը դէպի
այս մուսած զեղեցիկուհին ամեն ժամ առաւելա-
նում էր, կընդանի կընդ ողջ յետ և յետ էր դառ-
վում և մոռացվում:

Եւ չը կարողացայ անտարբեր նայել, ինչպէս
ինքը Գիկոսը հոր էր փորում իր ամուսնական
բախտի համար: Եւ վճռեցի դարձնել մոլորվածին
դէպի ճշմարտութեան ճանապարհը և վարվել նրա
հետ խորամանկութեամբ: Մի օր, երբ Ձէկ-
մանը և միտքիս Գիկոսը զրօնում էին միասին
Երուսաղէմի յրջակայքում, ևս վերջոված ներս
ընկայ հնազանդ սենեակը, և աքհետական կեր-
պով ձևացնելով երեսիս վրա ահ և դող, գոչեցի
բարձրաձայն հէնց նրա ակնաշնչի մօտ.

—Նրան յափշտակեցին, նա չը կայ, Ձէկմանը
տարաւ նրան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՂՈՂՏԻ ԿԻՆԸ

Միւս առաւօտ մեր հասանք այն տեղը, որտեղ,
Գիկոսին կարծիքով, պէտք է գտնվէին Սողոմոն
դուռերը: Գիկոսին չկրճ ողորդունքները Մեռեալ
ծովից ջրանցքներ անցկացնելու մասին բոլորովին
հանում էին ինձ համբերութիւնից, երբ ես մտա-
րերում էի Ձէկմանի երեկվայ կրքոտ խօսքերը:
Եւ ուզում էի բացանել այս քամախտի աչքերը,
բայց Ձէկմանի ներկայութիւնը խանգարում էր ինձ:
Բայց աշխատեցի հեռացնել նրան շուտով և խո-
սել Գիկոսին հետ կնոջ մասին, թէ ինչպէս ան-
ներկի է նրան բոլորովին յանձնել իր անձը հնա-
դարական և մուսանալ բոլորովին այսպիսի օրի-
նակի կնոջը: Եւ խոսում էի երկար ժամանակ և
ախպէս չեմ, որ Գիկոսը սկզբից բարկացած նա-
յում էր ինձ վրա, իսկ յետոյ խոսութեամբ նկա-
տեց ինձ, որ ես իրաւունքը հոսնեմ խառնվելու նրա

ընտանեկան գործերում, թէ և այս նկատողութիւնը
նրա կողմից բաւական կոպիտ էր, բայց ևս չը
նեղացայ: Ինձ ուրախացնում էր այն միտքը, որ
եթէ հազաւեւ ընդունակ էր նեղանալ ինձանից,
որ խառնվեցայ նրա ընտանեկան գործում, ըն-
դունակ կը լինի ուրիշն ևս առաւել, որ նայի
զրուցութեամբ ամեն կողմը և դառնայ դէպի
կինը:

Բայց իմ ուրախութիւնը վաղաժամանակեայ էր
շատ Գիկոսը մոռացաւ ինչպէս մեր խօսակցու-
թիւնը, նոյնպէս և իր կողմութիւնը: Մէկ ժա-
մից յետոյ իմ և վերադարձած Ձէկմանի առաջ
սկսեց խօսել կրկին իր հնազանդական ցնորքների
վրա և կրկին մէկ ժամից յետոյ արդէն պատարատ
էր գնալ հետադարձութիւններ անելու:

Գիկոսը վերադարձաւ ուշ երեկոյան. նրա
հետ էր մի ուրիշ, որ բարձր էր ծանր և մած
բնուով: Հնազանդ փայլում էր մի այնպիսի
երջանիկ փայլումով, որ ոչինչ կարծիք չը կար, որ
մի նոր գիւտ է արել: Եւստով տեսանք մէկը, որ
ուրիշ բնու մի տարօրինակ քար էր մարդկային
ձևով:

—Այդ բն է, հարցրիք ամենքս միասին:
—Գուշակեցէք, առաջարկեց պարծանքով հնա-
զէտը:

պատճառով չեն գործել, այլ անձնական շահերից դրդված: Այդպիսի բացառութիւններ այնքան քիչ և այնպիսի անհամակերպ անձնաւորութիւններ են, որ հանրապետականները կարող են այդ զինուորին անկ առանց կորցնելու իրանց հեղինակութիւնը, իսկ սենատը կարող է դրանով բաւականանալ որովհետեւ այնուամենայնիւ սենատի առաջարկութիւնը սկզբունքով ընդունված կը լինի:

Այսպէս թէ այնպէս Ֆրանսիական ազգային երկու ժողովների մէջ բացարձակ անբաւականութիւն չի պատահի: Միապետականները մեծ անհամբերութեամբ սպասում էին այդ անբաւականութեանը և դրանով մտածել տուին սենատի չափաւոր հանրապետական անդամներին, որ նրանք հանրապետութեան թշնամիներին օգնում են: Այս իրողութիւնը ապացուցանում է Բիւֆէի առաջարկութեան հետ պատահած անցքը: Բիւֆէ սենատին մի օրէնքի նախագիծ առաջարկեց, որ թոյլ է տալիս ժողովին եկեղեցական հանդէսներ կատարելու համար: Այդ օրէնքի նախագիծն առաջարկելու նպատակն այն էր, որ սենատին առիթ տրվի բողոքել կառավարութեան կարգադրութիւնների դէմ հողերականների վերաբերութեամբ: Ամենքը կարծում էին, որ այդ առիթով նորից կը կազմվի այն մեծամասնութիւնը, որ մերժեց Ֆրանսիայի օրէնքի 7-դ յօդուածը, բայց սենատը կարծ վիճաբանութիւններից յետոյ մերժեց Բիւֆէին նրա առաջարկութիւնը հերթական դարձնել և դրանով ցոյց տուեց, որ չէ կամենում բողոքել կառավարութեան կարգադրութիւնների դէմ:

Պատգամաւորների ժողովն էլ յայտնեց իր հաւատը դէպի կառավարութիւնը: Պօլ Կասանակ հարց առաջարկեց, թէ ի՞նչի կառավարութիւնը հրաժարական չը տուեց սենատի քուէարկութեանց յետոյ: Պատգամաւորների ժողովը այդ հարցի քննութիւնը մի ամսով յետաձգեց և ցոյց տուեց, որ նա չէ կամենում աւելի դժուարացնել կառավարութեան դրութիւնը:

Նորեքուստ ստացված «Միջազգային» ընկերութեան հեռագրերը հաղորդեց, որ պատգամաւորների ժողովը երկրորդ քննութիւնից յետոյ ընդունեց ամբիստայի օրէնքի նախագիծը:

Ֆրանսիական սենատի յուլիսի 3-ի նիստի մասին, որի ժամանակ քննվեցաւ ամբիստայի օրէնքի նախագիծը, գերմանական լրագրիւններին Փարիզից հեռագրում են:

Դեմքեր և Վիկտոր Հիւգօ սենատորները պաշտպանում էին օրէնքը: Ժիւլ-Սիմօն նրա հակառակ էր խօսում և հերքում էր այն փաստը, իրր թէ Ֆրանսիական ազգայնականութիւնը ցանկանում է ամբիստայի: Նա աւելացրեց, որ այնուամենայնիւ ժողովրդական ցանկութիւններին միշտ զինուորական պէտք չէ անել և հարկաւոր է լուսաւորել ազգը: Ֆայտի սկզբունքներ ունեցող մարդը նրանցից չը պէտք է հրաժարվի, այն պատճառով, որ այդ սկզբունքները կորցրել են իրանց ժողովրդականութիւնը: Այն կառավարութիւնը, որ անկարող է կառավարել երկիրը հասարակական կարծիքի համեմատ, պէտք է հրաժարվի իշխանութենից: Թէ Ֆրանսիայի և թէ հանրապետութեան համար չափազանց վիրաւորական կը լինի, եթէ մարդասպանները և հրդեհահիւնները ամբիստայ կը ստանան: Այդ բանին Ժիւլ Սիմօնը երբեք չի համաձայնի, մանաւանդ որ մեղաւորները չեն զլջացել և հաւատարիմ են մնացել ատելութեան զգացմունքին: Քանի որ ամուսնութիւնը բաւը միայն մի կողմից է արտասանվում, ամբիստայի թուլութեան նշան է: Ամբիստայի միութիւն չէ, որովհետեւ ոյժ գործածող մարդկերանց հետ միանալը աներեւակայելի է: Նիժէ սկսեց զինուորականները:

Հուտով նոր զինուորական կը պահանջեն և երբ վերջը կը մերժենք, դարձեալ ատելութիւն կը տիրէ: Ժիւլ Սիմօն յիշեցրեց հանրապետական Թիերին, որ վերականգնեց Ֆրանսիական ինքնիշխանական, զինուորական և դատարանական կողմերից և շարունակեց. «Ձեր նպատակն էր վերականգնել Ֆրանսիական հանրապետութեան կողմից: Նիժէ արեւ դուրս: Ոչինչ: Ձեր միակ հոգն այն է, որ ընտրութիւնները ամբիստայի հողի վրա կը կատարվին (ամբիստայի ազդեցութիւն կունենայ ընտրութիւնների վրա): Բայց ընտրութիւնների ժամանակ պէտք է գանգազնել ոյժի և ապառաժութեան քաղաքականութիւնները, թոյլ և որոշ դատողութիւն չունեցող քաղաքականութիւնը, կրօնի և խղճի ազատութեանը ձեռքառող, արդարադատութեան և կրօնի անկախութիւնը պատուող քաղաքականութիւնը: Ժողովրդական ոգին բարձրացնելու համար անհրաժեշտ է քաղաքական ցոյց տալ ոչ թէ միայն փողոցներում, այլ և գրասենյակի և պարլամենտի մէջ, մանաւանդ այնպիսի վրդովմունքի դէմ, որի պատճառը ոչ թէ հրացաններն են, այլ կառավարչական հրամանները: Միևնորոշութեան նախագահ Ֆրէյսինէ պատասխանեց, որ Ժիւլ Սիմօնի ասածները մի մեղադրական ձևաւ են կազմում: Կատարելութիւնը երբեք չէ փոխել իր հայացքը և միշտ այն կարծիքի է եղել, որ ամբիստայի հարկաւոր է ընտրութիւններից առաջ շնորհակցել: Հասարակական կարծիքը պահանջում է ամբիստայ, իսկ միևնորոշութիւնը կարող է կառավարել երկիրը պարլամենտի մեծամասնութեան հետ համաձայն: Միևնորոշութիւնը ցանկանում է ամբիստայ, ի նկատի ունենալով երկրի և հանրապետութեան շահերը և ոչ թէ ամբիստայի շահերը: Երկրի ընդհանուր կամքին ընդդիմադրելով փտնդաւոր է: Նիժէ ամբիստայի կը մերժվի, այդ հարցը պաշտպանող կառավարութիւնը կը կորցնի բարոյական նշանակութիւնը և չի կարողանալ շփոթութիւնների առաջն առնել: Անհրաժեշտ է վերջացնել հանրապետական կուսակցութիւնների մէջ տիրող անհամաձայնութիւնները, անհրաժեշտ է նոյնպէս արգելել արմատականներին ամբիստայի անունով մոլորեցնել ամբիստային: Իր ճառի վերջում Ֆրէյսինէ համոզում էր սենատին, որ նա զոհի իր կարծիքը, որպէս զի համաձայնութիւն կայանայ ազգային ժողովների մէջ և և վերջացնի տխուր անցեալի հետ, որոնց մասնակից են Ֆրէյսինէից առաջ խօսողները, իրեն նախկին միևնորոշութեան անդամներ: Ժիւլ Սիմօն բողոքեց Ֆրէյսինէի վերջին խօսքերի դէմ: Բերլինի «National Zeitung» լրագրին հաղորդում են, որ սենատի նախագահը յուլիսի 3-ի նիստի ժամանակ առանձին նախագահական միջոցներ էր ընդունել: Բայց այն, որ պոլիցիականների թիւը շատացած էր, նախագահը պահանջել էր և զօրքեր: Սենատի շինութեան առաջ բազմաթիւ պոլիցիականները ամբիստայ չէին թոյլ տալիս կանգնել: Նրեկոյնան ամբիստայ շատացաւ և մինչև այժմ իրան հանգիստ էր պահում: Ժիւլ Սիմօնի զեղեցիկ ճառը ծախսահարութիւններով ծածկեցին սենատի թէ աշակերտութեան և թէ ձախակողման անդամները: Ֆրէյսինէի ճառը համոզեցուցիչ չէր:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՔԻԱՅԻՑ

Վան, մայիսի 2-ին
Կամ մեր ազգ երջանիկ ապագայ մը պիտի ունենայ, կամ պիտի չունենայ, անշուշտ այս երկուքէն մէկն պիտի լինի. եթէ կը հաւատանք առաջին թէութեանը, ըստ այժմ պէտք է աշխատենք, իսկ թէ հաւատք չունենք մեր ապագային վրայ, լաւ է այժմէն որոշել այս բանը և թողուլ որ իւրաքանչիւր զք իւր համար ազգ մը ընտրէ և նախ յարելով երթայ ապրի հանգստութեամբ, եթէ ոչ իւր հայ, զէթ իւր մարդ: Սակայն ինչպէս յայտնի է

որ մեր առաջ դրուած կան երկու միջակները, նոյնպէս և բացայայտ է թէ ազգի զինուոր մասը ապագային վրայ հաւատք ունի և կը յուսայ որ օր մը հայ ազգն ալ պիտի դադրի ողբալէ և պիտի ունենայ վիճակ մը, զոր չունենալուն համար այսչափ կը տառապի և կը չարչարուի: Անշուշտ այդ հաւատով է որ կը շարժենք ազգ. վարչութիւնը, ս. պատրիարքը, ընդհ. ժողովը, լրագրիւնները, զրադէտները, ընկերութիւնները և այլն և այլն: Անտարակոյս այդ հաւատն էր, որով հայ պատգամաւորները խրադա քնացին, այդ հաւատով է որ ս. պատրիարքը եւրոպական դեսպանաց յաճախելով կը յաճախէ, և վերջապէս այդ հաւատն է որ ընդհանրապէս պէտք է ամեն հայու սրտին և մտքին, հողայն և բոլոր զգացութեանց մէջ, այդ հաւատքին վրայ պէտք է մեռնի ամեն հայ, և այդ պէտք է լինի հայու միակ նպատակը:

Սակայն ինչ օգուտ, մինչ և Պօլսոյ հայերն ոգի ի բուն կաշիստեն Հայաստանի վերակենդանութեան համար, մինչ Հայաստանէն դուրս բնակող երիտասարդները արեւն քրտնել մտած Հայաստանի համար ամեն նշողութիւն յանձն կառնեն, անդին բուն Հայաստանի մէջ առկա ընդհանրացած չէ այն հաւատ, թէ հայերն ալ երջանիկ ապագայ մը պէտք է ունենան: Հայաստանի դաւաճները տակաւին ձուլուած չեն այն ընդհանուր գաղափարին հետ, որ տիրող է և Պօլսոյ, Տփղիսի և այլն հայութեան վրա: Օրինակ, եթէ և Պօլսոյ կը կարծէ, որ Հայաստանի փրկութիւնը գրեթէ կը լինի, Հայաստանի մէջ դաւաճող և համարի թէ ըրելով կը լինի. եթէ Տփղիս կը հաւատայ թէ զենքով հնարաւոր է փրկութիւնը, Վասպուրական իր կղերէն լսած է թէ «Չէնք ձեռք առն ողն դ ժ ռ իւր պիտի երթայ» և այլն: Նիժէ մէկ գաւառի հայերն համոզուած են որ առանց զպրոցի յառաջակցութեան անկարելի է, ուրիշ գաւառ մը իսնխակալ գաղափարով պաշարուած կը կարծէ թէ զպրոցներէն եկող ազգայն ազգ և կործող կուրճան և այլն: Նիժէ հիւսիս կենտր կը գոչէ, հարաւը մահ կը ցանկայ. եթէ Տարսն լոյս կը պտայ, Տրապիզոն վարժապետ կը ծնծէ, եթէ կայ տեղ մը որ ազատամտութեամբ կը շարժի, կայ մի ուրիշ տեղ ուր ազատամտութիւնը անաստուածութիւն կը թարգմանուի, վերջապէս որ մէկն ասի, այնպիսի մէկ խառնիճաղանձ դրութիւն կը տիրէ հայոց վրայ, որ կրնանք ասել թէ որչափ դաւաճ, այնչափ դրութիւն, որչափ հայ, այնչափ գաղափար կը տիրէ այժմ: Մասնաւորորեն խօսքերին որ աւելի պարզ և բացօթյա լինի. մինք օրինակ պիտի բերենք միայն Վասպուրական, զի Հայաստանի ուրիշ գաւառները օրինակ առնուին իւրաքանչիւրին բնիկին կը վայելէ:

Ժողովուրդ մը երկու միջոցով ու է բանի վրայ գաղափար կը ստանայ, մէկը լսելով երկրորդը կարդալով: Վասպուրականի ժողովուրդը դեռ հասած չէ այն տեղ, որ կարդալով ուղղութիւն մը ընտրէ իւր համար և ըստ այնմ ընթանայ, այլ քանի որ տեղեւ է, եկեղեցւոյ բնիկն լսելով է որ ու է բանի վրայ գաղափար կը ստանայ: Արդ թէ որչափ ծուռ քարոզներ կը լսէ այնպիսի բաներու վրայ, որք և Պօլսոյ և այլուր նուիրական կը համարուին, թէ ինչպէս Վանի ժողովուրդը լսածներն հակառակ են և Պօլսոյի և այլ տեղացի հայոց լսածներուն, թէ ինչպէս Վանայ մէջ տարբեր ուղղութեամբ մը կառաջնորդութիւն հայն, քան զոր ուղեցոյց բռնած է իրեն ուրիշ գաւառացիին, բաւական կը համարենք միայն քանի մը օրինակներ առաջ բերել: Նախ զի այստեղ տեղեւ կղերներն միջոց պատիւ կը համարեն քրդաց հարստահարութիւններն, ինչպէս նկարագրած ենք մեր 1879 յուլիս 12 ամսաթիւ նամակով որ տպվեցաւ: Թէ բժէ մահն 636-դ թուոյն մէջ. 2, որպէս զի իրենութիւն ըրած չը լինեմք, այստեղ պիտի գնեմք յերեմիա եպիսկոպոսի մի ուրիշ քարոզ ալ, զոր դարձեալ Արարոց ս. Աստուածածին եկեղեցին խօսեցաւ, ևս իմ ականջով լսեցի, և որոյ նման քարոզներ հազար անգամ խօսած է նա քաղաքին և Այգեւստանի բոլոր եկեղեցեաց մէջ:

«Ի՞նչ, ըսաւ, զպրոց, զպրոց, առեւ կը պոռան աշխարհականներն, ժողովուրդն ինչ արդիւնք պիտի տեսնէ զպրոցներէն, քանի որ նոքա աշխարհականաց ձեռքն են: Ժողովուրդ, ըսաւ, եթէ կը տեսնէ որ զպրոց մը «եկեղեցականաց տեսչութեան տակ չէ, զիտեցէ որ անօգուտ է այն զպրոց... պէտք է որ հայոց մէջ որչափ վարժարաններ կան, ամենքն ալ եկեղեցականաց յանձնուին: Այսպէս չլրջալին է որ մեր ազգը այս զգալով վիճակին հասեր է, որ անաստուածներ, անկրօններ շատերն են, պահք լուծողներ չորս կողմ կը վրտան, զէնք ի, այդ դ ժ ռ իւր այնին դ օ թ ի թ վրա գաղափարներ սկսած են դարձել, հետեւապէս հայերն չեն տարբերեր այլ ևս քրդերէն, որոց միայն կը վայելէ այն ս ա տ ա

ն ա յ ա կ ա ն դ օ թ ի ն, զ է ն ք... Տեսէք, տեսէք, ըսաւ, պատճառն ինչ է որ և Պօլսոյ մէջ բոլոր հայ ժողովուրդը, իշխաններն, ամիրաներն անկրօն են, պատճառն այն է որ աշխարհականաց տեսչութեան ներքեւ գտնուող զպրոցներու մէջ ուսած են, որք լրբարար ճառատել միայն պիտեն: Աշխարհականն ինչ է որ ուսուցիչ լինի. ուսուցչութիւնը միայն կղերաց կը վայելէ: Նիժէ անսպին ինձ Վանայ վարժապետները, բոլորն ալ կղեր կը ձեռնադրել և կը պատուիրէի, որ հետեւեալ երկու բաներն միայն ուսուցանէին աշակերտաց, հայերէն գրել կարդալ մը և եկեղեցական երաժշտութիւն. փսն զի զպրոցաց կոչումն է ոչ թէ պատմութիւն, լեզու, թուաբանութիւն, չար սատանայութիւն (ճարտասանութիւն ըսել կուզէի), դիւանայութիւն և այլն սորվեցունել, այլ միմիայն եկեղեցական երաժիշտ հասցունել: Վարժապետաց աշխարհական լինելէն չէ որ սաղմոս, ժամագիրք կտակարան, նարեկ և սոցա նման հոգեւունչ գիրքեր թողված՝ նոցա տեղ աշխարհաբար ընթերցարան, պատմութիւն նոր կտակարան և այլն դաս կը տրուին, աշխարհաբար կըսեմ, որ բողոքականաց լեզուն է և որ մեղք է եթէ հայոց վարժարան մօտ գտնէ: Չառաջան ուսմանց ծաւալումն չէ պատճառ որ ժողովուրդեան վարք, բարքն ապականել է. ինձ չափ Ֆրանսիայէն գիտնալէն, ինչ օգուտ ու է եւ եւրոպական լեզու գիտնալէն, դեռ կը ծառայեն միայն մոքերը պղտորելու հողերականաց դէմ, և նահապետական առաքինութիւնները խափանելու. ցոյց տուէք ինձ ուսեալ մը, որ առաքինի լինի, լեզուագէտ մը որ անպարկեշտ, լիբը և ապականեալ չը լինի: Պրանսիայի փառք մինչև յերկինս բարձրացած էր Նապոլէօնի օրով, քանի որ Ֆրանսիայի զպրոցներն ճ ի դ ու թ կուզած ՍՈՒՐԲ և ԱՍՏՈՒԱՐՆԻՍՏԻՐ կրօնաւորաց ձեռքն էին, բայց երբ որ ամբարշտացան Ֆրանսիայէն և իրենց զպրոցաց տեսչութիւնը այն ՍՈՒՐԲԵՐՈՒՆ ձեռքէն առնելով տղամարմաւ աշխարհականներու յանձնեցին, այն ժամանակ չուշացուց Աստուած ճոցա պատուհաս, այլ բրոսիացի անօրէն և անկրօն բողոքականներն նոցա վրա հանելով, դանոնք պատժեց, ինչպէս որ հայոց վրա քրդերն կը հանէ: Թիւրքեր և քիւրդերն երբեք մեղաւոր չեն, զի նոքա արիւժ կամ չը գիտեն, իսկ հայերը որ աշխարհի միակ ճշմարիտ քրիստոնեաներն են՝ դեռ չառ սաստիկ պիտի պատուհասուին, եթէ շարունակեն իրենց անօրէն ընթացքն, պիտաւորապէս այն որ բարկ կուտան կառնեն շ ու ն բ ո ղ օ բ ա կ ա ն ց հետ, որք որդիք սատանայի, որդիք սաղապի են, մանաւանդ անոնք, որ հայ ազգութիւն ունին. նշողեալ և անիծեալ է այն մարդն, որ առուուոր կանէ բողոքականի մը հետ, զի լաւ է մահմետական լինել, հնդիկ լինել, քան բողոքական...»

Ընթերցող, եթէ դեռ շարունակեմ այս Աստուած ա շ ու ն քարոզն, գիտեմ ոսկերաց քըստմնելէդ դողի պիտի բռնուի, ուստի այս չափն բաւական կը համարիմ և կը դառնամ եղբակացունել թէ՛ երբ ժողովուրդ մը իւր արքայիսկոպոսէն այսպիսի քարոզներ լսէ, ալ ինչ ոգի և ինչ զգացում կը մնայ իւր քով, դու չափէ: Ալ ինչպէս կարելի է այն ժողովուրդն ստակ ուղել զպրոցի համար. ուսուցանական ինչ յարգ կունենայ, տղայ մը ինչպէս կրնայ իւր հօրն առն թէ, զիս զպրոց խրկէ կամ ինձ համար թուաբանութեան, պատմութեան դասագիրք մը գնէ և այլն: Ստուգիւ չի հաւատացուիր թէ յերեմիա եպիսկոպոս այսպիսի քարոզներ խօսի, բայց մեծ դժբաղդութիւն ունիմ ասել որ իմ անկանջով լսել եմ և հազարաւորներ լսած են:

Վանեցի

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆԻ

—ԹԻՖԼԻՍ. Գ. Իգմ. Ձեր յօդուածը չենք կարող տպել մեր լրագրում: Նրկար է և մասնաւոր հարց է: Բայց եթէ տպէք առանձին թերթով, կամ բրօշուրով, կը տարածենք «Մշակին» հետ:

—ՄՍՍԿՎԱ. Լ. Խ. Ա. Մենք սովորութիւն չունենք տպել յօդուածներ պատկերներով: Եթէ կամենում էք, կը տպենք առանց պատկերների:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 4 յուլիսի: Հրամայված է թիֆլիսի նահանգի Բորչալուի գաւառը առանձին պրիստաւութիւն դարձնել:

ՓԱՐԻՉ, 4 յուլիսի: Պատգամաւորներին ժողովի նիստերը փակված են:

Կ. ՊՈԼԻՍ, 4 յուլիսի: Հացֆելդի յանձնեց Բ. Դրանը պետութիւններէ ընդհանուր գրութիւնը Բերլինի կօնֆերանցիցի վճռի հետ:

ՍԻՄԼԱ, 4 յուլիսի: Երբ Կանդազարի նահանգապետ Նիր-Ալի հրամայեց իր զօրքերին յետ քաշվիլ դէպի Գիրշիկի, նրա բոլոր հետեակ զօրքերը փախան, վերցնելով իրանց հետ թնդանօթներ, հրացաններ և պատերազմական պաշարներ:

Անգլիական զօրաբաժինը, որի բանակը Գիրշիկի մօտ էր, յարձակվեցաւ փախստականների վրա, ցրվեց նրանց, 200 մարդ սպանեց, խլեց թնդանօթները և պաշարները: Նիր-Ալիի հեծելազօրքը և բոլոր օժիցները հաւատարիմ մնացին:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 5 յուլիսի: Լօնդօնից ստացված հեռագիրը յուլիսի 2-ից հաղորդեց, որ մարկիզ Յզենդ ուղևորվեցաւ Ս. Պետերբուրգ: Սեր տեղեկութիւնների համեմատ այդ լուրը անհիմն է: Յզենդին Ս. Պետերբուրգում շուտ չեն սպասում:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 5 յուլիսի: Լօնդօնից ստացված հեռագիրը յուլիսի 2-ից հաղորդեց, որ մարկիզ Յզենդ ուղևորվեցաւ Ս. Պետերբուրգ: Սեր տեղեկութիւնների համեմատ այդ լուրը անհիմն է: Յզենդին Ս. Պետերբուրգում շուտ չեն սպասում:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱԹԵՆՔ, 5 յուլիսի: Այսօր յունական կառավարութեանը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանեց մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

ԱՆԳԼԻԱՅԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օդօդարձիական պատկերներ 20% զինու մով. վերաբերւոյն 6—20 ր., խողանակներ պաշտօնատիրութեան են լինի մէջ առանձնապէս անգլիական խանութի համար, ամենալաւ անգլիական, տրիդիկով 4 ր., Նեֆիլդի դանակներ 3—20 ր. դիւթիւր, բրիտանական մետաղի թէյամաններ 30 ր.,—3 ր., ցիտրատ-մազնեղիա, թիւրքական շերտէթ և ծարար Բազնեղի նիւթ 70 ր., ամենալաւ պօրու մէյն և խրես 1 ր. 40 ր. շիշը, շամպայն 3 ր. շիշը:

20—20

ԳԵՐԱԶԱՆՑ ԱՆԻՐ 2-որդ ՏԵՍԱԿԻ Պատաստված մաքուր ցորենից առանց թեփի, բերված է Նյսիկի և ծախվում է Կուկիայում նոր բացված պահեստում, ելի-գալէտիսի փողոց, տուն Գանանովի, Փօթի-թիֆլիսեան երկաթուղու վարչութիւնից ոչ հեռու: Նոյն տեղ ծախվում է նոյնպէս Նյսիկից բերած և Փօթիում պահվող 5000 պուդ մաքրված գարի:

5—5 (2)

ՄԵԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ գիտի հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներ, կամենում է ԿԱՆՏՈՐԶԻԿԻ ԳՈՐԾԱԿԱՆՏԻ ԿԱՄ ԹԱՐԳՄԱՆԻ տեղ ունենալ: Ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրութեանը:

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒՆԴԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՊՈՏԵԱՆ 9-13 ՄԻՆՉԵԻ 1 ԺԱՄԱՆ:

Երկուշաբթի. Գաւրօն սկի կանանց հիւանդ. Գօրալե վիշ ներքին հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւււա-րեանց խորուրդիական և աչքերի հ., Ծաւմբօրսկի վիշերական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինիկ վիշ խորուրդիական հ., Վզօրօ վիշերական և բողազի հ., Բէյլեան աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօզլե աչքի, Լիսիցե վիշ և Կրասնօզլե վիշերին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցե վիշ Բուդովովի ներքին հ., Ծաւմբօրսկի վիշերական և կաշու հ., Աստուածատուրօ վիշ կանանց հիւանդութիւնների: Հինգշաբթի. Վզօրօ վիշերական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցե վիշ և Կրասնօզլե վիշերին հ., Քիւււա-րեանց կանանց և երեխաների հ.:

Ուրբաթ. Գաւրօն սկի կանանց հ., Մինիկ վիշ խորուրդիական հ., Կրասնօզլե աչքի և Լիսիցե վիշերին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Ծաւմբօրսկի և Աստուածատուրօ վիշերական և կաշու հ., Բաբայեան ջղային և ներքին հ.:

Շաբաթ. Լիսիցե վիշ և Կրասնօզլե վիշերին հ., Բաբօ վիշերին հ., Եանկօ վիշերական և կաշու հ.:

Բացի այդ բժշկ. Վզօրօ վիշերականի մէջ ընդունում է անխառն աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը: Բժշկ. Բաբայե վիշերաբժի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիև-կայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առանձնաբոյժ Օբրեկստ աղքատ հիւանդներին բժշկանոցի տնայնոց ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ: Բացի կիրառի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում ընդունում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրքը Կրասնօզլե:

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (2 ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Գրականաւանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՇԽԱՐՀԱՅԻՐՈՒԹԵԱՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԻՈՆԵԱՆՑԻ:

Ե. ՏՏՐԻ նախագիտելիք (իբրև հայերենագիտութեան դասերի օրինակ տրուած է թիֆլիզի հայերենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է 35 կոպ.

Բ. ՏՏՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, առնողներին զիջումն էր լինի: Մամուլի տակ է Գ. ՏՏՐԻՆ մասը քաղաքական:

1—20

Աղէքսանդրապօլս երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով: Ցանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձուր { Սարգիս Միրզայեանց.
 { Ասատուր Իսահակեանց.

Քաղաքային ուսումնարանական մասնաժողովը յայտնում է, որ սեպտեմբերի 1-ից կը բացվին թիֆլիսի մէջ Արհեստական և քաղաքային սկզբնական ուսումնարաններ: Աշակերտների ընդունելութիւնը ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ ուսումնարանում կը սկսվի օգոստոսի 15-ին: Խնդրքները հասարակ թղթի վրա և ուսումնարանական մասնաժողովի անունով զրկած, տրվում են քաղաքային վարչութեան հերթակալ անդամին ամենայն օր առաւօտեան 10—12 ժամը: Խնդրքը հետ պէտք տրվին մետրիկական և ծաղիկը պատուաստելու վիշայականները և որոշ նշանակված պէտք է լինեն բնակութեան տեղը և տան պօլիցիական համարը: Սկզբնական ուսումնարանի մէջ ընդունվում են 8—14 տարեկան երեխաներ և նրանցից ոչինչ գիտութիւն չէ պահանջվում: Արհեստական ուսումնարանը մտնող երեխաների հասակը որոշվում է 12—16 տարեկան: Նրեխաները ամուր կազմվածք պէտք է ունենան ու առաջին դասատուն մանկու համար նրանցից պահանջվում է. Կրօնգրքիստոնէական վարդապետութեան կարճատե հրահանգները և օրբազան պատմութիւն, ռուսաց լեզուից-կարդալ, գրել և կարդացածը պատմել, հայերի և վրացիների համար նոյնը իրանց մայրենի լեզուով, թուրքական լեզուից-առաջին 4 գործողութիւնները և պարզ խնդիրների մտաւոր լուծումը, ժամանակի, դրամի, կշեռքի և այլ չափերի գիտեալը:

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱԿԱՍԱՍ ՊԵՏԱՐԻՍ. ՅԻՆ Կից կը բացվին ՍԵՆԵԱՅԵՐ, որտեղ կարելի էր լինի տոմար ԿԱՅԷ, ՇՈՇՈՒԿ, ԹԷՅ և պատրաստված հանքային դանազան ըզրն:

20—40

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Զաք. Գրիգորեանցի ձեռագրական գրականաւանոցում Ընդհանուր աշխարհագրութիւն, Ա. տարի, Նախագիտելիք (հայերենագիտութիւն թիֆլիսի) 5 պատկերներով, Աշխատասիրութիւն Ն. Սիմոնեանց: Գինն է 35 կոպ. գումարով առնողներին 20% զիջումն էր լինի:

Մամուլի տակ են, Ընդ. Աշխ. Բ. տարի, մասն ուսումնական (մասնաւորական) և բնական և ընդ. Աշխ. Գ. տարի, մասն քաղաքական: Վերջին երկու գրքերի ապագրութիւնը աւարտելուց յետոյ կը հրատարակուեն նոյն գները: Օտար քաղաքացիք գիտում են:

Въ Тифлисъ. Кавказская книжная торговля З. П. Грикурова. 20—20

ՎԵՐՋԵԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Հրացաններ, ընկճիւրներ, դանակներ, գրիչներ, անուշահոտութիւններ, սապօն, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱՅԱՆ ՄԱԿԱԶԻՆՈՒՄ:

18—20

На Воронцовой Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухней, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.